



# ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՎԸ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՐԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՍԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



## ԹԱՒԼԵԱՆ ՄԱՆԿԱՄՍՈՒՐԻ ԱՃԱԿԵՐՏՏԵՐԸ ԱՉԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՎԸ ԱՅՑԵԼԵՑԻՆ

Ազգային Առաջնորդարանի սրահն ու նրբանցքները Երեքաբթի, 16 Մարտի առաւօտուն պարուրուեցան գունագեղ տարազներով ճռուղղող մասունքներու կենսաւորող մթնոլորտին մէջ: Արդարեւ, Ազգային թաւեան մանկամսուրի աշակերտները, մանկամսուրի վարիչ Տիկին Յեղին Մանուչարեանի, դաստիարակներու եւ կարգ մը ծնողներու առաջնորդութեամբ, այցի եկան Ազգային Առաջնորդարան եւ իրենց անմեղունակ արտայայտութիւններով պահ մը մանկացուցին «Ազգի Տունը»:

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան դիմաւորեց դեռատի աշակերտներն ու անոնց ընկերացող ուսուցիչները: Առաջնորդ Սրբազնին կողքին էին Զրիստոնեական Դաստիարակութեան բաժանմունքի վարիչները՝ Գերա. Տ. Միւռոն Ծ. Վրդ. Ազնիկեան եւ Յոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիմեան, ինչպես նաև Ազգ. Առաջնորդարանի անձնակազմի անդամներ: Մասունքները նախ առաջնորդուեցան «Ս. Տրդատ եւ Ս. Աշխեն» մատուռը, ուր միասնաբար երգեցին «Հայր մեր» եւ ունկնդիր եղան Առաջնորդ Սրբազնին ու Յոգեւոր Յայրերուն Արեւագալի ու այլ շարականներու երգեցողութեան:

Աղօթքի պահեն ետք, աշակերտները խմբուեցան «Տիգրան եւ Զարուիի Տէր Ղազարեան» սրահին մէջ. անոնք իբրեւ իւրայատուկ նուեր՝ պատրաստած էին սեղմ յայտագիր մը՝ երգերով ու արտասանութիւններով: Դեղին եւ կապոյտ դասարանները նաեւ իրենց ձեռակերտը եղող յուշանուերներ յանձնեցին Առաջնորդ Սրբազնին:

Գրատուն այցելելէ ետք, երբ աշակերտները կը պատրաստուեին բարձրանալ դահլիճ, պատին վրայ նկատեցին Քաջն Վարդան Մամիկոնեանի բարձրաքանդակ պատկերը եւ ինքնարուին կերպով սկսան երգել Ս. Վարդանանց նուիրուած երգեր: Դալիճին մէջ, Առաջնորդ Սրբազնը անոնց ուղղեց սրտի խօսք մը. ան յայտնեց, թէ աշակերտները այսօր իր հիւրերն են, ինք զանոնք կ'ընդունի այս դահլիճին մէջ, ուր այցելութեան կու գան պետական անձնաւորութիւններ ու ականաւոր մարդիկ. ան մաղթեց, որ աշակերտներն ալ ականաւոր անհատներ դառնան, երբ հասակ առնեն: Յանդիպումի աւարտին, Առաջնորդ Սրբազնը աշակերտներուն, ուսուցիչներուն ու ընկերակից ծնողներուն յանձնեց յուշանուերներ ու պատկերներ:

Այցելութեան աւարտին, մանուկներն ու դաստիարակները վերադարձան դպրոց, յիշատակելի պահ մը բոլորելէ ետք Ազգ. Առաջնորդարանի յարկին տակ:

## **TAVLIAN PRE-SCHOOL STUDENTS VISIT THE PRELACY**

On the morning of Tuesday, March 16<sup>th</sup>, 2010, Tavlian Pre-School students, accompanied by director Mrs. Helen Manoucherian, teachers and parents, visited the Prelacy. Upon their arrival the students were led to the “St. Dertad and St. Ashkhen” Chapel where they were greeted by H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, Very Rev. Fr. Muron Aznikian, and Very Rev. Fr. Barthev Gulumian. In the Chapel, the students sang the Lord’s Prayer and followed as the Prelate and Rev. Fathers conducted a brief Lent Sunrise service.

The students then headed to the “Dikran and Zarouhie Der Ghazarian” Hall where they presented a program of songs and recitations, after which they presented the Prelate with a hand made memento.

Following a tour of the bookstore, the students gathered in the reception room where the Prelate conveyed his message and presented the students, teachers, and parents with mementos.